BANK AMIO










# Mastercard World

# Առավելություններ

Ինտերնետ ռոումինգ

Կոնսիերժ ծառայություն

Fast Track

Lounge Key

Զեղչեր և ակցիաներ

# Mastercard LoungeKey

Ներկայացնելով Ամիօ բանկի Mastercard World քարտը մասնակից սրահներում՝ հնարավոր է ստանալ՝

- Lounge Key անվճար անդամակցություն,
- Անվճար մուտք դեպի ավելի քան 1200 LoungeKey բիզնես սրահներ աշխարհի ավելի քան 135 երկրներում, 450-ից ավելի քաղաքներում,
- Բիզնես ծառայությունների հասանելիություն՝ ինտերնետ, հեռախոս, և նույնիսկ կոնֆերանսի հարմարանքներ որոշ սրահներում,
- Անվճար զովացուցիչ ըմպելիքներ և խորտիկներ:

Անհրաժեշտ է ներկայացնել Mastercard® քարտը մասնակից սրահներում կամ գեներացնել QR կոդը՝ LoungeKey հավելվածի միջոցով:

Արտոնությունից օգտվելու համար քարտը պետք է լինի ակտիվ և ունենա դրական մնացորդ, քանի որ քարտի վավերականությունը ստուգելու նպատակով ուղարկվում է SMS հաղորդագրություն, և գանձում չի իրականացվում:

**Կայքի հղում՝**
https://www.loungekey.com/we-arm

**Ուղղություններ՝**
Ամբողջ աշխարհ

**Հասանելիություն՝**
• Mastercard World – տարեկան 6 մուտք՝ հյուրի հնարավորությամբ

# Ինչպե՞ս օգտվել

LoungeKey-ն ունի հատուկ կայք և հավելված, որտեղ գրանցվելուց հետո կարող եք տեսնել մասնակից օդանավակայանների ցանկը, ստուգել ծառայության հասանելիությունը, ինչպես նաև ստանալ QR կոդ՝ բիզնես սրահ մուտք գործելու համար:

## Կայք

**Քայլ 1**



Այցելել LoungeKey կայք

**Քայլ 2**



Ստեղծել LoungeKey հաշիվը՝ լրացնելով քարտի տվյալները

**Քայլ 3**



Մուտք գործել հաշիվ՝ ցանկացած ժամանակ և ցանկացած վայրից

**Քայլ 4**



Ստուգել արտոնություններն օնլայն ռեժիմով

## Հավելված



**Քայլ 1**

Անհրաժեշտ է ներբեռնել LoungeKey հավելվածը՝ ընդունելով Օգտագործման պայմանները և պահանջվող թույլտվությունը



**Քայլ 2**

LoungeKey հավելվածը կերևա էկրանին



**Քայլ 3**

Քարտապանն ուղղորդվում է մուտք գործելու հատված, որտեղ կարող է ստեղծել LoungeKey հաշիվ



**Քայլ 4**

Քարտապանն ուղղորդվում է դեպի հաշվի ստեղծման էջ, որտեղ մուտքագրում է վճարային քարտի տվյալները



**Քայլ 5**

Քարտապանը լրացնում է իր վճարային քարտի տվյալները



**Քայլ 6**

Քարտապանը մուտքագրում է իր անձնական տվյալները, ընտրում է օգտատիրոջ անունն ու գաղտնաբառը և սահմանում է իր հաղորդակցման նախապատվությունները



**Քայլ 7**

LoungeKey-ի նոր օգտատերը ավարտում է գրանցման գործընթացը և ուղղորդվում է մուտքի հատված՝ նախապես լրացված իր օգտանունով

# Fast Track

**Fast Track ծառայությունը հասանելի է Եվրոպայի ավելի քան 100 օդանավակայաններում, ինչպես նաև «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում՝ տարեկան 6 անգամ՝ հյուրի հնարավորությամբ:**

Mastercard Travel Experiences հավելվածում (IOS, Android) Fast Track անցաթուղթ պատվիրելու համար պարզապես անհրաժեշտ է ընտրել օդանավակայանը, ճամփորդողների թիվը և ցանկալի ժամանակահատվածը:

Fast Track անցաթուղթը գեներացվում է հավելվածում կամ էլ. փոստի միջոցով, որից հետո անհրաժեշտ է մոտենալ տերմինալի Fast Track գոտի:

Մուտք գործելու համար անհրաժեշտ է ներկայացնել Fast Track անցաթուղթը:

Արտոնությունից օգտվելու համար քարտը պետք է լինի ակտիվ և ունենա դրական մնացորդ, քանի որ քարտի վավերականությունը ստուգելու նպատակով ուղարկվում է SMS հաղորդագրություն, և գանձում չի իրականացվում:

# Fast Track

Մուտքագրեք օդանավակայանի անունը «Օդանավակայանի որոնում» դաշտում




Ստուգեք հասանելի ծառայությունները




Ամրագրեք Ձեր Fast Track Pass-ը




Ցույց տվեք/սկանավորեք Ձեր Fast Track Pass-ը՝ առաջնահերթ գոտի մուտք գործելու համար



# Կոնսիերժ ծառայություն

AMIO BANK | Mastercard

Ճամփորդության պլանավորման կամ ամենօրյա բազմաթիվ պահանջների և գործերի դեպքում Կոնսիերժ ծառայությունը կդառնա Ձեր օգնականը:

Mastercard կոնսիերժ ծառայության պրոֆեսիոնալ օգնականների թիմը կօգնի Ձեզ պլանավորել կատարյալ հանգիստ՝ գտնել և ամրագրել հյուրանոցներ, տոմսեր և ժամանց, գտնել և առաքել ցանկացած ապրանք ամբողջ աշխարհում, ամրագրել սեղաններ ռեստորաններում, տոմսեր՝ տարբեր ժամանցի վայրերի և սպա կենտրոնների համար, ստանալ ցանկացած տեսակի տեղեկատվություն և շատ ավելին:

**Ուղիղ կապ կոնսիերժ ծառայության հետ՝ 24/7**
Կոնսիերժ ծառայությունը հասանելի է բոլոր հայտնի մեսենջերների միջոցով (Viber, Telegram, WhatsApp), ինչպես նաև հեռախոսի և էլեկտրոնային փոստի միջոցով:

Ինչպե՞ս օգտվել

Անցե՛ք հետևյալ հղումով հեռախոսի միջոցով՝ https://arm.concierge-support.com/

Ընտրե՛ք Ձեր նախընտրած մեսենջերը

Մուտքագրե՛ք քարտի առաջին 6 նիշը և հեռախոսահամարը (գրանցման ժամանակ՝ միայն մեկ անգամ)

Հասանելի է հարցումների լայն շրջանակ

- Տոմսերի, հյուրանոցների կամ բնակարանների ընտրություն
- Սննդի առաքում և առաքման այլ տեսակներ ամբողջ աշխարհում
- Ապրանքների և ծառայությունների որոնում ու ամրագրում
- Ցանկացած այլ կազմակերպչական և տեղեկատվական հարցումներ Mastercard ծառայությունների վերաբերյալ

# Կոնսիերժ ծառայության նկարագրություն

- ✓ Տեղեկատվական ծառայություններ (չվերթների և գնացքների ժամատախտակների, հիվանդանոցների և այլ կենտրոնների, վերջին նորությունների, քարտապանի բանկի և այլ տեղեկատվական ծառայություններ)
- ✓ Ճամփորդական աջակցություն (տոմսերի և հյուրանոցների ամրագրում, ճամպրուկի կորստի դեպքում աջակցոյթյուն և այլ ծառայություններ)
- ✓ Միջոցառումների կազմակերպում ամբողջ աշխարհում
- ✓ Ամրագրումներ ամբողջ աշխարհում (կինոթատրոններ, թատրոններ, ակումբներ, ռեստորաններ և այլն)
- ✓ Առաքման ծառայություն (ծաղիկների, ուտեստների և այլ իրերի առաքում)
- ✓ Հեռախոսակապի կազմակերպում քարտապանի և բանկի միջև
- ✓ Տեղեկատվություն Mastercard քարտապանին հասանելի առավելությունների մասին
- ✓ Օդանավակայաններում դիմավորելու և VIP սրահի ծառայություններից օգտվելու կազմակերպում
- ✓ Անձնական գնորդի ծառայություն ամբողջ աշխարհում
- ✓ Տնային տնտեսության ծառայություններ (մաքրման, ինտերիեր դիզայնի, վերանորոգման ծառայությունների կազմակերպում)
- ✓ Եվ այլ բազմատեսակ ծառայություններ

# Global Roaming (FlexiRoam)

FlexiRoam համաշխարհային ցանցն ընդգրկում է 520 օպերատոր ավելի քան 208 երկրներում:

Կապի մեջ եղեք վայրէջքից անմիջապես հետո:

Ընտրեք հուսալի ինտերնետ FlexiRoam-ից՝ ոչ վստահելի Wi-Fi- ի կամ սահմանափակ կապով ռոումինգի փոխարեն:

**Գործողության ժամկետ և ծածկույթ**

- Տարեկան 1 ԳԲ անվճար ռոումինգ (վավերականությունը 15 օր)
- 15% զեղչ՝ հավելվածի լրացուցիչ ծառայությունների համար

**Ինչպես ակտիվացնել**

1. Անհրաժեշտ է ներբեռնել FlexiRoam հավելվածը
2. Սեղմել Mastercard նշանին՝ սակագնային փաթեթի իրավասությունը ստուգելու համար
3. Մուտքագրել Amio Mastercard-ի 16 նիշանոց համարը և էլ. հասցեն՝ հաշիվ ստեղծելու համար
4. Սեղմել «Redeem Starter Plan» և ակտիվացնել էլեկտրոնային SIM քարտը (eSIM)
5. Հեռախոսի կարգավորումներում ակտիվացնել FlexiRoam Data Roaming-ը
6. Անցնել սակագնային փաթեթին

# Գրանցում / Մուտք (FlexiRoam)

Ներբեռնելուց հետո անհրաժեշտ է բացել FlexiRoam հավելվածը




Եթե դեռ առկա չէ հաշիվ, սեղմել «Գրանցվել» կոճակը




Ակտիվացնել հաշիվը՝ հետևելով FlexiRoam-ի կողմից ուղարկված էլ. նամակի հղմանը






# Առաջարկի ակտիվացում (FlexiRoam)

AMIO BANK | Mastercard

Ընտրել Mastercard քարտապանների համար նախատեսված առաջարկը




Մուտքագրել Mastercard քարտի տվյալները՝ ծրագրին մասնակցության հաստատման համար




Կարտացովի Mastercard-ի հատուկ առաջարկի ստացման մասին տեղեկատվությունը



# eSIM-ի ակտիվացում

Անհրաժեշտ է անցնել «Հաշիվ» բաժին և ընտրել «Իմ SIM» ենթաբաժինը







«Իմ SIM» ենթաբաժնում ընտրել Global eSIM և սեղմել «Ներբեռնել» կոճակը

# Առաջարկի ակտիվացում (eSIM)

eSIM-ի ակտիվացումն ավարտելու համար հետևել սմարթֆոնի հրահանգներին




Հետևելով սմարթֆոնի հրահանգներին՝ հաստատել նոր eSIM-ի ակտիվացումը՝ սեղմելով «Թույլատրել» կոճակը







Կարգավորման ընթացքում կամ դրանից հետո, eSIM-ը ավելի հեշտ օգտագործելու համար՝ ընտրել անվանում eSIM-ի համար, օրինակ՝ FlexiRoam



# Կարգավորման ավարտ (eSIM)

Համոզվել, որ FlexiRoam eSIM-ն ակտիվ է և սմարթֆոնի կարգավորումներում ընտրված է որպես հիմնական կապ






# Սակագնային պլանի ակտիվացում (eSIM)

Մուտք գործել «Հաշիվ» բաժին և ընտրել «Իմ սակագնային պլանը» ենթաբաժինը

Սեղմել ընտրված տվյալների սակագնային պլանի վրա

Անմիջապես ակտիվացրել սակագնային պլանը կամ ընտրել ակտիվացման հարմար ամսաթիվ









# FlexiRoam-ի աջակցության բաժին

Աջակցության բաժնի հետ կապ հաստատելու համար անցնել «Աջակցության կենտրոն» բաժին կամ սեղմել հետևյալ նշանը







Ապա ընտրել համապատասխան կապի միջոցը

BANK
AMIO